

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿԵՆՆԻՔ

Սիսիանում այժմ այլևս չկան նախկին բազմանդամ գերդաստանները. այժմեան ամենաբազմանդամ ընտանիքը, որ իւրաքանչիւր գիւղում հազիւ երկու կամ երեք հատ է պատահում՝ բաղկանում է 20—25 հոգուց: Այս երևոյթը բացատրւում է ոչ թէ հայի բնաւորութիւնով, ինչպէս այս նկատուում է թուրքերի և ռուսների մէջ, այլ այժմեան տընտեսական պատճառներով: Առաջները հողը շատ էր և նրան մշակելու համար անհրաժեշտ էին շատ բանուորներ, ուստի և այն գերդաստաններն էին աւելի հարուստ, որոնք ունէին աւելի բանուորներ. և այս էր պատճառը, որ մօտիկ ազգականները, ունենալով մի ընդհանուր գործ՝ չէին կամենում բաժանուել և շարունակում էին միասին ապրել: Մինչդեռ այժմ, երբ հողը սաստիկ քչացել է և երկրի մշակութեան ձևը մնալով նոյն նահապետական գրութեան մէջ, քիչ հողից բաւականաչափ արդիւնք չէ ստացւում՝ գերդաստանի անդամները, որոնց կարիքը օրից օր աւելանում է՝ ստիպուած են ուրիշ պարապմունքներ որոնել պանդխտութեան մէջ: Այսպիսով ծագում է նրանց վաստակների անհամաչափութիւնը: Իսկ աշխտատանքի և վաստակի տարբերութիւնը առիթ է լինում բաժանման:

Միւս կողմից էլ հետզհետէ տարածուող քաղաքակրթութիւնը քայքայում է նահապետական գերդաստանը, տալով անհատներին աւելի անկախ, անհատական կեանք:

Քայքայուող նահապետական գերդաստանի մէջ տան իրաւունքը պատկանում է հօրը, որ սակայն չէ օգտուում նախկին անսահման իշխանութիւնով: (Նրա բռնութիւն գործդնելու դէպքում՝ որդին սպառնում է թողնել հայրական.

տունը և գնալ Բագու, տնկախ գործ սկսելու): Նրան է լանձնուում որդիների աշխատանքը, նա է տնօրինում և ծախսում բոլոր եկամուտները. սակայն օտարութեան գիմած որդին իւր վաստակի շատ փոքր մասն է ուղարկում միացնելու այդ ընդհանուր սեփականութեան: Հօր մահից լետոյ աւագութիւնը անցնում է աւագ որդուն, սակայն սրա իրաւունքները աւելի ևս կրճատուում են. նա պարտաւորուում է փոքր ի շատէ ծանրակշիռ հարցերում անշուշտ խորհրդակցել եղբայրների հետ և նրանց համաձայնութեամբ գործել:

Տան ներքին կառավարութիւնը գտնուում է մօր ձեռքում. նրա անմիջական տնօրինութեան տակ է գտնուում տան ամբողջ բարիքը. առանց նրա թոյլտուութեան ոչ հարսները և ոչ իսկ որդիներն իրաւունք ունին մի բան վերցնելու: Նրան լիովին հնազանդում են հարսներն ու աղջիկները և օրանց աշխատանքը նա է միշտ բաժանում:

Սկեսրոջ անձնափոխանորդ համարում է մեծ հարսը, որին սկեսուրը հետզհետէ վարժեցնում է իւր պաշտօնը ստանձնելու: Այսպէս՝ նրան սովորեցնում է պանիր շինել, կերակուր եփել, հսկել միւս հարսների վրայ: Եւ երբ փոքր հարսներից մինը մի զանցառութիւն է անում՝ սկեսուրը բարկանում է մեծ հարսի վրայ, որ լաւ չէ հսկել նրա գործի վրայ:

Հարսները պարտաւոր են կատարելապէս հպատակել սկեսրոջը և մեծ հարսին. նրանք իրաւունք չունին նրանց հետ խօսելու, այլ պէտք է «հարսնութիւն անեն», երկու և աւելի տարիներ: Սրանք հարսնութիւն պիտի անեն նաև սկեսրայրի առաջ իրենց ամբողջ կեանքում: Տէգրերի առաջ էլ հարսնութիւն են անում, սակայն ոչ այնքան երկար. եթէ նրանք ամուսնացած չեն՝ մինչև մի տարի, իսկ եթէ ամուսնացած են՝ մինչև որ իրենք մի քանի որդոց կամ հարսների տէր կը լինին: Միակ անձնաւորութիւնը, որի հետ հարսնութիւնը միայն մի քանի օր է տևում՝ տալն է, որ միևնոյն ժամանակ միջնորդի գեր է կատարում: Երբ մի բան հարցնում են հարսին՝ սա ցած ձայնով պատասխանում է տալին,

իսկ սա բարձր ձայնով կրկնում է: Իսկ եթէ տալ չէ լինում՝ հարսը միմիկայով է պատասխանում, կամ բարձր ձայնով ասում փոքրիկ երեխաներին, թէպէտ սրանք ոչինչ էլ չըհասկանան: Շատ անգամ պատահում է, որ հարսը կամենալով սկեսրոջ կամ սկեսրայրի մեղադրանքներից իրեն արդարացնել՝ խօսքը ուղղում է իւր մանկանը և մի առ մի առաջ բերում արդարացնող փաստերը: Սկեսուրը լսում է նրան և հերքում, որի պատասխանը հարսը նորից ուղղում է մանկանը: Հարսի ձայնը աստիճանաբար բարձրանում է, և երբ սկեսուրը ծայրայեղութեան է հասցնում՝ հարսը ուղղակի դառնում է նրան: Այս գէպքում սկեսուրը կամ ինքը խփում է նրան և կամ գանգատում նրա ամուսնուն:

Նահապետական հայեացքների ազդեցութեան տակ՝ ամօթ է համարում, որ ամուսինների փոխադարձ յարաբերութիւնները մեղմ և սիրային լինին: Ամուսինը գէպի կինը աւելի պակաս յարգանք պէտք է ցոյց տալ, քան գէպի միւս հարսները. կինը նոյնպէս աւելի յարգանք է ցոյց տալիս գէպի տէգրերը քան թէ գէպի ամուսինը: Երկուսն էլ, տան մեծերի ներկայութեամբ, չեն գրկում կամ խաղում իրենց երեխայի հետ, մեծ ամօթ համարելով այդ:

Երբ տան մէջ խռովութիւններ են պատահում, երբ սկեսուրը կամ միւս հարսները գանգատում են կնոջ մասին՝ ամուսինը ամօթ է համարում պաշտպանել նրան և մի կողմից էլ ինքն է յարձակում նրա վրայ, շնայելով որ համոզուած է նրա անմեղութեան մէջ: Կնոջ հետ կոպիտ վարուելը, նրան տեղի-անտեղի հայհոյելը՝ մի տեսակ ռադամարդութիւն է համարում:

Ամուսինը կնոջ մասին խօսելիս՝ ամօթ է համարում նրան ուղղակի իւր կինը կամ ամուսինը կոչել, այլ գանազան կերպով կոչում է նրան.—իւր ծնողների առաջ՝ «հարսը», «Յարութենի աղջիկը». աներոջ առաջ՝ «աղջիկա». օտարների առաջ՝ «մեր հարսը», «մեր Յարութենին աղջիկը». կնոջը հետ խօսելիս՝ «այ Յարութենի աղջիկ», «այ կնիկ»:

Կինը ամուսնու մասին խօսելիս՝ նոյնպէս այլ և այլ

կերպով է անուանում նրան. — սկեսրոջ առաջ՝ առջեւ, տալի առաջ՝ ախպէրտա, տէգեր կնոջը՝ առէգրտա, իւր ծնողների՝ «փեսէտա, ուրիշների՝ մեր հայր», «Առաքելի (որդու) ապերը», «Տէր Գէորգին աղէն»։ Իրեն հետ խօսելիս՝ ասում է «է՛լ, կամ ա՛յ հայր»։

Առհասարակ ոչ միայն երկու սեռը միմեանցից հեռու են մնում, այլ և միեւնոյն գերգաստանի երկու սեռի անդամներն էլ միմեանցից զատուած, միմեանցից առանձնացած են ապրում։ Կանայք իրաւունք չունենալով տան մեծերի հետ կամ նրանց ներկայութեամբ խօսելու՝ միշտ առանձնանում են՝ իրենք իրենց ժամանակ անց կացնելու, և կամ լուռ լսում են տղամարդկանց խօսակցութիւնը. նրանք միասին հաց անգամ չեն ուտում։

Հաց ուտելիս տղամարդիկ և երեք տարեկանից բարձր տղաները միասին են ճաշում, իսկ կանայք նրանցից լետոյ առանձին։ Երբեմն պատահում է, որ մայրն էլ տղաների և ամուսնու հետ սեղան է նստում, սակայն միշտ մի կողմն է թեքւում, իբր թէ առանձին է ճաշում։ Սովորաբար նա ճաշում է հարսների և աղջիկների հետ. բայց այս անգամ էլ փոքր հարսն է առանձին հաց ուտում, չհամարձակելով՝ սկեսրոջ հետ միասին նստել։ Իսկ երբ սկեսուրը չէ լինում՝ փոքր հարսը թէև մեծ հարսների հետ նստում է՝ բայց և այնպէս մի կողմ է թեքւում և երեսը չարդաթով ծածկած՝ հաց ուտում։

Երբ երեկոյան բոլոր անդամները հաւաքւում են տանը՝ մէջ՝ հայրը ծալապատիկ նստում է թոնրի գլուխը, այսինքն՝ դռան հանգիպակաց կողմը, ուր գուռը բաց անելիս քամին չէ փչում. նրա կողքին նստում են կրտսեր եղբայրը և ապա՝ օրդիներն աւագութեան կարգով։ Տան փոքրերը և ծառան նստում են թոնրի ական կողմը, դռան կողմը գտնուող մասում։ Ծառան, որ միայն հարուստ տներումն է լինում և առաւելապէս վարձւում է անասունները հոգալու և դաշտում աշխատելու նպատակով՝ տան անգամ է համարւում։ Նա տղամարդկանց հետ է հաց ուտում, նրանց խօսակցութիւններին

առանց քաջուելու մասնակցում: Սա ևս աներկիւղ հրամայում է փոքր հարսին. ալսպէս, օրինակ, եթէ կամենայ ջուր խմել, նոյն իսկ այն միջոցին, երբ բոլոր տղամարդկանց հետ հացի է նստած՝ հրամայում է փոքր հարսին, որ ջուր տայ, և սա առանց տրտնջելու կատարում է հրամանը:

Երբ քնելու ժամն է հասնում, — իսկ սա շատ ուշ չէ լինում, — առաջ տան մեծը բոլորի ներկայութեամբ, աղօթք շնջալով, հանում է շորերը և պառկում: Նրանից մի քիչ յետոյ պառկում են միւս տղամարդիկ, միշտ աշխատելով, որ կրտսերը աւագից առաջ չպառկի: Ապա հանւում են տատը և աւագ հարսները, իւրաքանչիւրը տեղաւորւում է իւր ամուսնու կողքին, զաւակը մօտն առած: Ամենից վերջը մնում է փոքր հարսը, որ զգուշութեամբ հանգցնում է ճրագը, հանւում և գնում ամուսնու մօտ: Սովորաբար ամբողջ գերդաստանը ամառը էյվանում, իսկ ձմեռը տալին է քնում, մինի անկողինը միւսին մօտ: Միայն փոքր հարսինը սկզբներում առժամանակ «տան-օթախումն» են ձգում:

Ինչ վերաբերում է աշխատանքի բաժանման՝ պէտք է ասել, որ տղամարդիկ պարապում են գլխաւորապէս դաշտային աշխատանքներով ու արհեստներով և տնային աշխատանքներին գրեթէ բոլորովին չեն խառնւում. մինչդեռ կինը ոչ միայն կատարում է տնային աշխատանքները, այլ և օգնում է ամուսնուն դաշտային աշխատանքներէ մէջ: Եւ երբ ձմեռը տղամարդը պանդխտութեան չէ դիմում, այլ տանն է մնում՝ նա անգործ անց է կացնում օրերը, մինչդեռ կինը շարունակում է աշխատել:

Տղամարդկանց աշխատանքը սովորաբար հալըն է բաժանում, հետեւելով դարաւոր սովորութիւններին: Մի քանի գործեր էլ, օրինակ սերմ ցանել, նա ինքն է կատարում, որպէս մի առանձին արտօնութիւն:

Իսկ կանանց աշխատանքը մալըն է կարգադրում, դարձեալ իրեն և իւր անձնափոխանորդին վերապահելով մի քանի աշխատանքներ, ինչպէս ջահրա մանել, պանիր մէրել, որպէս մի առանձին արտօնութիւն: Սակայն դարաւոր սովորութիւն-

ները արդէն իսկ բաժանել են հարսների աշխատանքները, այնպէս որ շատ անգամ սկեսուրը դժուարանում է խախտել այն:

Այսպէս՝ սկեսրոջ պարտականութիւնն է կերակուր եփել և հաց թխել: Առաջին հարսինը՝ խնոցի հարել, պանիր շինել, կով կթել, Երկրորդ հարսինը՝ ալիւր մաղել, խմոր հունցել, հաց բաց անել: Երրորդինը՝ տունն աւելել, հաց դնել, ժողովել, ոտ լուանալ, ջուր տալ լուացուելու, հանդը հաց տանել և քակոր շինել:

ԱԶԳԱԿՑԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐ

Մեծ հօրը	ասում են	պապ.
Մեծ մօրը՝		մամ.
Հօրը՝		ամի, ապէր.
Հօրեղբօրը՝		տմի, ապէր.
Հօրեղբօր կնոջը՝		հարսը, զիզի, մեծ զիզի, կուճի զիզի:
Մօրեղբօրը՝		դայի.
Մօրեղբօր կնոջը՝		քուսկին.
Հօրաքրոջը՝		շիբի.
Մօրաքրոջը՝		բիբի.
Քրոջը՝		պաճի (թուրք.), անքուր.
Եղբօրը՝		ապէր.
Կնքահօրը՝	պելի, խաչախաչէր.	
Կնքամօրը՝	սնամէր.	

Խնամ մ'ոնք.

Ամուսնու հօրը՝	պատրոն.
» մօրը՝	սկեսուր.
» եղբօրը՝	տէգր.
» քրոջը՝	տալ.
» եղբօր կնոջը՝	տէգրակին.
Կնոջ հօրը՝	աներ.
» մօրը՝	զոնքաշ, իսկ հետը խօսելիս՝ զիզի:
» եղբօրը՝	հանոր տղալ.
» քրոջը՝	քենի.
» քրոջ ամուսնին՝	բաշանաղ: